հովիւ գիւղի՝ գիտակ այսմ, և ածին զնա յԵրուսաղէմ առ Յովհաննէս վարդապետ, և նա սկիզբն արար 'ի պատմել։ Ոմանք 'ի Ֆէլլահաց եկին առ իս երթալ յԵրուսաղէմ եւ կողոպտել 'ի քաղաքի զայս նիշ տուն, և 'ի պատճառել ի-մում չմտանել 'ի քաղաքն, մեկնեցան յինէն, և յառաւ-տեան պահու գնացեալ առ նոսա, տեսի զի բաժանէին 'ի միջի իւրեանց զինչս եկեղեցւոյ։ զարմացեալ ընդ այն՝ հար-ցի ցնոսա, թէ զիա՞րդ մտեալ իցեն 'ի վանս, և նոքա ա-սեն՝ մինչ խորհէաք 'ի գերեզմանատունն Հայոց, եկն առ մեզ մի ոմն յայլազգեաց Սիոնի, և որսացեալ զմիտս մեր ասէ։ ահա՛ դիպող առիթ կողոպտելոյ զվանս Հայոց, զի յաղաքս տօնի իւրեանց, բերեալ են անդ բազում ինչ, և փութացեալ երեր զսափոր ջրոյն և զարս երկուս ընդ իւր, և սկսան բաղխել զդուռն վանայ և խնդրել զջուր, զի ժա-մըն էր իրրեւ 11։ և 'ի բանալ դռնապանին, հարաք ըզ-գլուխ նորա և տապալեցաք զնա անդ, և մտեալ 'ի ներքս խողխողեցաք զարս երիս, և աւարի առաք զեկեղեցին և զսենեակս, եւ տպա բարձաք նաեւ զվիրաւորն 'ի կենաց և մեկնեցաք անտի, և տուեալ ինձ բաժինս յաւարէ ան-տի, պատուիրեցին չխօսիլ ինչ ումեք, եւ մին 'ի նոցանէ էր 'ի քաղաքէն Երուսաղէմի։ Լուեալ Հայոց զպատմու-թիւնս զայս, ետուն ըմբռնել զայրն քաղաքացի, և 'ի մատ-նել զայն քաղաքապետին 'ի գանս, մատնեաց զգողակիցս իւր, յորոց մին էր Սիոնցի այրն Համտան անուն, և գո-ղոնն թաքուցեալ 'ի գիւղն Բեյթ Ճալայ 'ի տուն առն միոյ, թաղեալ 'ի ներքոյ քարի, և գնացեալ հանին զայն անտի, և բերին յԵրուսաղէմ, այլ ոչ զբովանդակն, զի միայն զբա-ժին առնն գտին անդ։ Եւ 'ի պահու քննութեան՝ յայտնի եղեւ թէ գողութիւնն լեալ է 'ի ձեռս այլազգեաց Սիոնի, եւ Համտան փախուցեալ 'ի քաղաքէն։ Այլազգիք Սիոնի բազում անգամ գործեալ էին զայսպիսի ոճիրս և մնացեալ անպատիժ, որպէս յառաջագոյն եւս սպանեալ էին զարս երկուս անդ 'ի վանս Ս։ Փրկչի, և հաստուցեալ բազմադի-մի վնասս, և Խալիլ անուն ոմն 'ի նոցանէ մտեալ 'ի վանս Ս։ Հրեշտակապետի, սպանեալ անդ եւս զարս երկուս և կողոպտեալ զեկեղեցին, և 'ի վաճառել նորա զԱւետարան մի 'ի Կոստանդինուպոլիս 'ի Դալաթեա, թափեաց 'ի ձե-